Դ ԹՈՒՂԹ, էջ ժ, ՍԻՒՆ Բ

և մեք թէպէտ մարմ..
յերկրի եմք այլ հաւատո.
յերկինս եմք շինեալք
ուր ոչ կարէ համանել յա.
ձեռագործ շինուածն Քրիստոսի
հաստատուն կացէք յա.
շուշտ զաւրագլուխն մեր
որ ոչն երբէք մոռացի
զգործ նահատակութ.ա.
ձերոյ։ Ո՛վ քաջք, մեզ
այս աւր մեծապէս է զոր
կատարեաց Աստուած ի ձեռն մեր
ոյ ընութեանս, յորում և
զաւրութիւնն Աստուծոյ մեծապէս
երևի։ Զի եթէ զայս
կոտորելով ի վերայ աստուածա
յին աւրինացն պարծան.
անձանց ժառանգեցաք
զքաջատոհմ ազգի և եկ
եղեցւոյ թողաք, և վար
.ուց ակնկալութիւնն

ՏՊ. էջ 346

Եւ մեք թէպէտև մարմնով
յերկրի եմք, այլ հաւատովք
յերկինս եմք շինեալ.
ուր ոչ ոք կարէ համանել յան-
ձեռագործ շինուածն Քրիստոսի։
Հաստատուն կացէք յան-
շուշտ զօրագլուխն մեր,
որ ոչ երբէք մոռացի
զգործ նահատակութեան
ձերոյ։ Ով քաջք, մեզ
այս մեծապէս է՝ զոր
կատարեաց Աստուած ի ձեռն մե-
րոյ ընութեանս. յորում և
զօրութիւնն Աստուծոյ մեծապէս
երևի։ Զի եթէ զայլս
կոտորելով ի վերայ աստուածա-
յին օրինացն՝ պարծանս
անձանց ժառանգեցաք,
և զքաջ անուն ազգատոհմին մերոյ
թողաք եկեղեցւոյ, և վար-
ձուց ակնկալութիւն ի Տեառնէ է ....

Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

ԱՌԱԿ

ԵՂՈՒՆ ՆԱՆՆԻԿԸ

Գարնան ժամանակ,
Խիտ ծառերուն տակ,
Գեղջկին ընտանիք
Նընջէր երջանիկ։
Օրօրոցը ծառէն կախուած
Կը տատանէր կամաց կամաց։
Գեղջկին կինը քաղցըր ձայնով
Կ'երգէր նաննիկ օրօրելով.
Նորա անուշ գեղգեղին մեղմ ելեւէջ՝
Նըրբատերեւ ծառերուն մէջ,
Ծաւալելով ալիք ալիք՝
Գերազանցէր սոխակին իսկ դայլայլիկ։
Քընեց երեխան քընով անուշակ.
Գիշերը բացաւ իւր սեւ դըրօշակ.
Լըռեց բընութիւն և մարդիկ բոլոր,
Կ'անցնէին ժամեր խաղաղ և անդորր։
Տեսնես երեխան զարթելով քիչ վերջ
Ըսկըսաւ թընձկալ օրօրոցին մէջ։
Զայդ որ լըսեց իշակը,
Որ կը քընէր ծառին տակը,
Անհըրաւէր և անկոչ՝
Ուզեց անել ծառայութիւն մ'իւր տիկնոջ.
Օրօրոցին գալով մօտ
Նա ըսկըսաւ զըռալ սաստիկ կոշտ ու խորթ.
Կ'երգէր նաննիկ՝ օրօր օրօր.
Թընդաց գեղջկին տուն բոլոր։
Կու լար տըղան լեղապատառ.
Մայրը ցատկեց շընչասպառ.
Եւ հազիւ հազ իւր տիրասէր իշակին
Նա արժանի վըճարեց գին։
Եղբայր էշը կ'երգէ օրօր ու նաննիկ,
Իսկ խօզը տաղ՝ մեղեդիք,
Այդ շընորհքին անասնածիր
Ականջ բեր ու դիմացիր։

Ա. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

digitised by · A.R.A.R.@